ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեստան համայնք, Շահումյան փ.16, հեռ. 0235 6 00 41,
էլ. փոստ araratay gestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 5 » նոյեմբերի 2013 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՈՒՄ:

Քննարկվեց համայնքի բնակիչ Ժուլետա Վարդանյանի դիմումը՝ իրեն իր սեփական ավտոմեքենայի գույքահարկի մուծումից ազատելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ Այգեստանի գյուղապետարանը իր բազայում չունի ավտոմեքենա և համայնքի ղեկավար Սոկրատ Հովսեփյանին պատկանող ավտոմեքենան մշտապես օգտագործվում է գյուղապետարանի կարիքների համար, ինչի դիմաց վառելիք չի տրամադրվում,

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի 3-րդ կետով,

Համայնքի ավագանին որոշում է

ազատել

1.Սոկրատ Հովսեփյանին իրեն պատկանող ՇԿՈԴԱ մակնիշի ավտոմեքենայի 14700 /տասնչորս հազար յոթ հարյուր/ դրամ գույքահարկի մուծումից:

2.Ժուլետա Վարդանյանին՝ իրեն պատկանող ԳԱԶ-24 մակնիշի ավտոմեքենայի 18800/տասնութ հազար ութ հարյուր/ դրամ գույքահարկի մուծումից:

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Հ.ԱՎԱԳՅԱՆ		
Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ		
Կ.ԹԵԼԼԻՅԱՆ		
Յ.ՀԱԿՈԲՅԱՆ		
Ա.ՍԱՀԱԿՅԱՆ		
Օ.ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ